ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ (ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐ)

Անվանումը	**Տեխնիկական բնութագիրը**
Շարժիչը	Բացառապես էլեկտրական, հզորությունը՝ ոչ պակաս 170 կՎտ/ժ, ձիաուժը՝ 220-250, 0-ից 100 կմ/ժ արագացումը՝ ոչ ավել, քան 10 վարկյանում:
Չափսերը (մմ)	Երկարություն՝ 4400-4700 Լայնություն՝ 1900-2000 Բարձրություն՝ 1600-1800 Անվային բազա՝ 2700-2800 Ճանապարհային լուսածերպ (կլիռենս)՝ 180-190:
Մարտկոցները	Լիթիում-իոնային, համախմբված հզորությունը՝ ոչ պակաս 65 կՎտ/ժ, արագ լիցքավորման հնարավորությամբ, նախատաքացման և հովացման համակարգով
Վազքը մեկ լիցքավորմամբ (կմ)	Ոչ պակաս 450
Լիցքավորում	Սովորական ռեժիմ՝ ոչ ավել քան 7 ժամում Արագ ռեժիմ՝ ոչ ավել քան 40 րոպեում
Օպերացիոն համակարգ	Հայերեն և/կամ անգլերեն և/կամ ռուսերեն
Քաշը (կգ)	Ոչ պակաս 1900
Բեռնատարողությունը (կգ)	Ոչ պակաս 400
Անվադողերի չափսերը	Նվազագույնը R17 դույմ թեթևաձույլ անվահեծ
Թափքի տեսակը	Ունիվերսալ (SUV), գույնը՝ սև (գործարանային), 4 դուռ, նստատեղերի քանակը 4-5, առջևի կամ հետևի տանող
Արտադրության տարեթիվը	2024թ.
Հարմարավետությունը	Սրահի նստատեղերի պաստառը կտոր կամ կաշեպատ, գույնը սև կամ մուգ մոխրագույն, օդորակիչ, տաքացնող համակարգ, առջևի նստատեղերը տաքացվող և էլեկտրական կառավարմամբ, գործարանային AM/FM ռադիոընդունիչ առնվազն 4 բարձրախոսով, հետընթացի տեսախցիկ, կողային դռների բոլոր 4 ապակիները

	էլեկտրակառավարվող, կենտրոնական փական համակարգով, ավտոմատ մգեցմամբ սրահի հայելի, սրահի առջևի և հետևի ռետինե գորգեր:
Անվտանգությունը	Մեքենայի սրահում առնվազն 6 անվտանգության բարձիկ, սրահի յուրաքանչյուր նստատեղ ունենա իր առանձին ամրագոտին, հեռակառավարվող կենտրոնական փական, ESP համակարգ, ABS (արգելակման ապաբլոկավորման) համակարգ, ավտոմատ ալգելակման համակարգ, առջևի և հետևի հակամշուշային լապտերներ, էլեկտրակառավարվող կողային հայելիներ:
Երաշխիքը և պարտադիր պայմանները	Ավտոմեքենայի համար առնվազն 36 ամիս կամ 150 000 կմ գործարանային երաշխիք ավտոարտադրողի կողմից, իսկ քարշակող մարտկոցի համար՝ 8 տարի կամ 160.000 կմ գործարանային երաշխիք ավտոարտադրողի կողմից:
	Շահող ընկերությունը պետք է հանդիսանա տվյալ ավտոարտադրողի պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում
	Շահող ընկերությունը երաշխիքային պայմանագիր կնքելուց հետո պայմանագրում ներառվող ապրանքների և ծառայության արժեքները (ներառյալ ապրանքը և դրա փոխարինման արժեքը) պետք է սահմանի վերջին 1 տարվա ընթացքում շահող ընկերության կողմից այլ անձանց կամ կազմակերպություններին փաստացի մատուցված ծառայությունների և ապրանքների արժեքներից նվազագույնը 10 տոկոսով ցածր գնով:
	Մեքենայի վրա պետք է տեղադրվի սրահի առաջնամասը հետնամասից առանձնացնող ճաղավանդակ, հետնամասի դռների վրայի ճաղավանդակ և հետևի դիմապակու ճաղավանդակ, որի տեղադրողը ընտրվելու է գնումների մասին ՀՀ օրենքով՝ մրցույթային ընթացակարգով, որը չպետք է խոչնդոտի տրանսպորտային միջոցը երաշխիքի մեջ մնալու պայմանին:
	Մատակարարը պետք է ունենա՝ ավտոպահեստամասերի (ընթացային, թափքի մասի պահեստամասեր) պահեստ կամ խանութ, վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (մարտկոցների, ընթացամասի, էլեկտրականության, անվաբացքի կարգավորման, վուլկանացման, ղեկային մասի, փոխանցման տուփի, մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ, ինչպես նաև զոդման և թափքի ներկման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն):

	Մատակարարման ժամկետը՝ մինչև 2024թ. նոյեմբերի 1-ը:
	Մեքենայի վազքը մատակարարից ընդունման պահին չպետք է գերազանցի 500 կմ-ը:
	Տրանսպորտային միջոցը պետք է համապատասխանի ԵԱՏՄ ТРТС018/2011 տեխնիկական կանոնակարգի պահանջներին:
Հավելյալ պարտադիր պայմանները	Մատակարարվող ավտոմեքենայի հետ պետք է առկա լինի ձեռքի փրփրային՝ 3-ից 5 լիտր ծավալով կրակմարիչ, դեղատուփ, վարորդական գործիքների հավաքածու (8-22 համարի գործիքներ, մուրճ, պարան, հարթաշուրթ, ուղիղ և խաչաձև պտուտակահան), լիցքավորման սարք՝ համապատասխան մալուխով: